զինն աղբիւրս ջուրց շատրուանովք հանդերձ, որոց ջուրն գնայ անկանի ի ստորին անկիւն պարտիզին յաղբիւրն, յորմէ կարեն ըմպել անցաւորք։ Պարտէզն անգամ մեծ է իբր երկու և գուցէ աւելի ևս քան պարտէզն որ առաջի մերոյ նորընծայարանին, յօրինեալ պէսպէս ծառովք, բուսովք, ծաղկօք և շատրուանօք, որ երևի իբրև զդրախտն ադենական, որ մերոց է յոյժ հարկաւոր, ի վերջն նորա կայ քօշք ինչ, յոր կարէ ոք զկնի շրջելոյ ի պարտիզին, հանգչել։

Երկայնութիւն տեղւոյն, որ բաղկացուցանէ զպարտէզն և զբնակարանն է իբր 100 *կամ* 110 *քայլ բնական. իսկ լայնութիւնն սոցա է իբր* 50 *կամ* 55 *քայլ. զմեծ մասն երկայնութեանն ունի պարտէզն, որպէս ի նկարագրին երևի. իսկ նայեցք բնակարանին մեծ մասամբ նայի ի հարաւ ի վերայ պարտիզին, որոյ առաջն է բաց և ազատ, ուստի և օդն է զարմանալի. և փոքր մասամբն նայի յարևելս ի վերայ ճանապարհին. ընդդէմ որոյ ի միւս կողմանէ ի ճանապարհին կայ որմն պարտիզին իշխանի ուրուք։ Բայց ի հիւսիսոյ կողմանէ կցին ի բնակարանն տունք ինչ փոքրելիք, որք են հինք, ցածք, և գռեհկականք, որպէս զտունս գեղացւոց, զորս ըստ ժամանակին կարեմք քակել, և ի տեղի նոցա կանգնել եկեղեցի ինչ, որ լինեցի զարմանալի դրիւք, զորմէ այժմ ոչ է ժամանակ խօսելոյ։ իսկ երկայնութիւն այսց տանց է իբր* 25 *կամ* 30 *քայլ, և լայնութիւն նոյնչափ, կամ ըստ համեմատութեան։ իսկ շէնքն տանն ի մէնջ բնակելւոյ, ոչ է պալատակերպ՝ այլ երևի իբրև զհասարակ տունս վէնէտիկոյ, պարզ և հին որմովք և պատուհանօք։ Արդ՝ զմեծութեան և զշինուածոյն ասացի, զի մի տեսլքն կարծելով մեծ ինչ, ըստ այնմ զգինն աճեցուսցեն. ուրեմն առաւել գնեմք զտեղին և զդիրքն, քան զշէնքն։ Ուրեմն մտածեալ ոչ գնիւթականութիւնն, ոչ կարեմք գտանել զայլ տեղի ի հոմ լաւագոյն քան զնա. մանաւանդ մտածելով զայլ յարմարութիւն ինչ արտաքին, ոչ յագիմ գովելով զտեղին, այսինքն է անթիւք թաղք զոն ի հոմ, որք ոչ ունին զվաճառանոցս մերձակայ ինքեանց. ուստի ի պիտոյ լինելն ինչ, մանաւանդ ի գիշերի, պարտ է վեր ի վայր շրջիլ. սակայն մեր տեղին է յայնպիսի դիրս, յորմէ քայլ մի յառաջ գնացեալ գտանես զվաճառանոցն զայն համբաւաւոր կոչեցեալ մագել տէ քօռվի, լի ամենայն տեսակ բարեօք, որպէս աշշէնսիօնն վէնետիկոյ. առ մեօք կայ և սքանչելի սիւնն տրայեանեան. և յամենայն տեղի ուր կամիմք գնալ ի մեր տեղւոջէն անկանի մօտակայ և դիւրահաս։ Մերձ է այնմ և զամպիտօլիօն և սանթա մառիա մաճիօռն, և փիացայ տի սպանիայն և փօնթա փիայն և նորընծայարանն յիսուսեանց են։...*

1764 *սեպտ*. 11 — *Հ. Մկրտիչ Ա[նանեանց]*

[Հռովմ]

ՄԽԹ.

Սառաֆեան իր երկար լռութիւնը կը խզէ ողջունի նամակաւ մը, խօսելով նաև Պոլսոյ Հայ Պատրիարքարանի շարժումներուն և նաև իր մասին։

Է

Տեառն Տեառն Սամուէլենոսի Սրբազնոյ Արքայի Հայոց՝ Յարգումն և Ողջագուրումն ընդ Յիսուսածին Ողջունի և Սիրոյ ընծայեալ մատուցանի ի Տէր

Հոկտ. 8, 1764 *ի Պօլիս*

Մերթ ընդ մերթ յընկալնումն իմ զպատուական աւանդն երկնածիր Ողջունի քոյոյ պայծառութեան՝ ի ձեռն մտերիմ միակրօն հպատակելոց քոց, նոյնն համարեալ լինիւր յաչս իմ իբր սիրայորդոր ընծայ իմն բարեվայել և զուարթարար, և ի վեր քան զոսկի